

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան ... 12 Ժր.

Վեցամսեայ ... 6 «

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւ մեկ ծրարով

Տարեկան ... 14 Ժր.

Վեցամսեայ ... 7 Ժր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60

Վեցամսեայ 1. 50 Տօյար «

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման սուր
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՐԵՆ ՉՈՐԻՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

Ирвоуик

VARNA (Bulgarie)

Редакция

НАВѢСТНИКЪ

Ирвоуик

ВАРНА

Դրոշմոշիւք եւ չին
տրոշիր

ԻՆՔՆԱՍՐՈՒԹԻՒՆ

Մենք զմեզ քաղաքակրթեալ ժողովուրդ մը ներկայացնելու համար առաւել կամ նուազ յարմար առիթները չենք փախցնել օտարներու առջեւ երբ կարգը խօսելու գալի. և ստէպ մենք մեզ ալ կը խաբենք մեր կապկած արտաքին ձեւակերպութիւնները՝ որոնք սոխի կեղեւի չափ ալ հաստատուն չեն իբր քաղաքակրթութեան փառք եր ցոյց տալով. իսկ իրականին մէջ, ցաւալի է ըսել թէ, քաղաքակրթութեան տարրական պայմանները յարգելու կը թերանանք:

Մենք մեզ սահմանադրական ազգ մը եղած ըլլալ կը կարծենք. և այդպէս ալ ցոյց կուտանք օտարին, որովհետեւ քանի մը տասնեակ տարիներ առաջ խրմբադրուած «Սահմանադրութիւն» կոչուող կանոնադրութիւն մը ունինք ի ձեռին մեր ազգային ու եկեղեցական ներքին գործերը վարելու համար: Բայց մեր ամենէ աւելի զարգացեալներուն մէջ իսկ շատ քիչեր կը յարգեն սահմանադրական գրութեան մը հիմնական սկզբունքը որ անհատի մը իր պարտքը եւ իրաւունքը գործնականապէս ճանչնալ ու յարգելու մէջ կը կայանայ:

Մենք, հայերս, մեր հանրային գործերու մէջ ոչ թէ միայն մեր պարտքը չենք ճանչնար, այլ նաեւ ստէպ մեր իրաւունքը գործադրելու մէջ կը թերանանք: Ի մասնաւորի արտասահմանեան հայութիւնը աչքի առջեւ ունենալով առնենք Պուլկարիոյ եւ Եգիպտոսի հայ գաղութները: Այս երկու մեծ հայ գաղութակա նութիւնները արտաքուստ իբր թէ սահմանադրապէս կը վարեն իրենց տեղական ազգային ու եկեղեցական գործերը. ընդհանուր քաւարկութեամբ կ'ընտրեն իւրաքանչիւր քաղաքի հայ ընտանկութիւնը իր թաղականը, հոգաբարձուն եւ ժողովականները, կամ աւելի ճիշդ քուէարկութեան նմանող բաներ մը կը

կատարեն. կ'ընտրեն մարդիկներ որոնք տեղւոյն քիչ շատ բանի եկող կամ գործէ հասկցողները կը համարուին, և ստէպ միեւնոյն մարդիկը կ'ընտրուին ու վերընտրուին: այդ ընտրեալները յանուն ժողովուրդին կը գործեն, կ'առնեն ու կը ծախեն, տարիներ կ'անցնին, չըջնան կը բոլորվին. հին պաշտօնէութիւնը կ'երթայ նորը կուգայ, ստէպ, ինչպէս ըսինք, միեւնոյն ժողովուրդի քուէներովը վերընտրուած: Բայց այդ ժողովուրդը լուրջ կերպով չը հարցնէր իր ընտրած այդ պաշտօնէութեան թէ տարիներու շրջանին մէջ ի՞նչ օգուտ առաջ բերաւ, ի՞նչ գանձեց եւ ի՞նչ ծախսեց, ո՞ւր է տեղեկագիրը եւ ո՞ւր հաշուեցուցակը: հինը կերթայ և նորը կուգայ, այս վերջինը առանց իր նախորդին հաշիւը ու տեղեկագիրը աչքին առջեւ ունենալու, որովհետեւ գացողը հաշիւ չտար, ոչ ալ տեղեկագիր կը ներկայացնէ, նորն ալ իր կարգին անպատասխանաւոր կերպով գործելու կը պատրաստուի, իրմէ նորին հաշիւ չտալու ու դատարի գրամարկը մը և կ'իսաւեր հաստատութիւններ միայն ձգելու մտադրութեամբ, վստահ ըլլալով թէ իր գործը այն տեսակ ժողովուրդի մը հետ է որ ինչպէս իր պարտքին նոյնչափ ալ իր հանրային իրաւունքին գործադրութեանը գիտակցութիւնը չունի:

Եւ այսպէս մենք արտասահմանի հայերս ականատես ըլլալով հանդերձ սահմանադրական եւ քաղաքակրթ ազգերու գործելու կերպին, կը թողունք որ ներքին փոքրիկ գործերն շարունակուին անհաշիւ և ապարդիւն կերպով. եւ միեւնոյն ատեն չենք գաղթիր մենք մեզ խաբել թէ քաղաքակրթեալ եւ սահմանադրական ժողովուրդ մըն ենք:

Այս սոսկալի ինքնախաբուծիւն մըն է որ մեզ անուղղայ կընէ և դէպի կորուստ կ'առաջնորդէ: Երբ մենք մեր արդի տեղական փոքրիկ գործերուն անընդունակ

կը ներկայանանք, ո՞րչափ աւելի ապիկար պիտի դոնուինք մեծագոյն գործեր վարելու երբ մեր խեղալը իրագործուի:

ՊՈՒԼԿԱՐԱՋԱՅ ԳԱՍՏԻԱՐԱՆ ԿՈՒԹԵԱՆ ՇՈՐԻՔԸ

Գ

Մեր նախորդ յօդուածով մատնանշել ջանացինք թէ մեր կըրթական իտէալը թերի և մակերեւութային եղած է: Այս ըսել չէր թէ մեր գաղափարն ծրագրեալ աւայս իտէալին համաձայն չի նուաճ: Ընդհակառակը: Կարելիին չափով՝ անոնք կը նկրտեն հեռուէն կամ փոքր եւրոպականներուն նմանիլ: Բայց անոնց մէջ վստացող ուրիշները չեն արդիւնք որ արդիւնքը դարձեալ գրամարկական — չըսենք գրագիտակաւ — ըլլար: Նորէն շուկայ նետուող շրջանաւարտները բազմին դէմ կը տրտնջեն և նախազգացում ունին իրենց ապագայ միջակութեանը՝ եթէ ոչ պարտութեանը: Նորէն անոնց յիշողութիւնը կարծաւ կ'անգրադառնայ. գրական կեանքին սոխի եւ սխտորին և հազուադէպ չեն այսպիսիներուն ծածկանուն կամ յայտնի դեգերումները այդ երեւակայութեան եւ երազի աշխարհին ռազարթալը սակ ծառուղիներուն վրայ: Առէք Մասիսը, Ծաղիկը, Լոյսը և մեր յայտնի օրաթերթերէն մէկ երկուքը և տեսէք թէ ոչ միայն անոնք գրեթէ տարամեծօրէն գեղեցիկ գաղութեամբ կ'ըրազին այլ նաեւ երիտասարդ գրողներուն բաւական մէկ ստուար մասը ոչ արհեստով ոչ ալ կոչումով գրագէտ են: Ի՞նչպէս բացատրենք այս անդիմադրելի ձգտումը դէպի գեղասիրական ֆէնէ-անդիզմը որ անշուշտ արդեւ մը կը ըլլայ մեր տնտեսագիտական յառաջդիմութեան: Բնական է որ՝ երբ վարժապետական մարմիններուն, մասնաւորի եւ ժողովրդեան մէջ տիրող կըրթական իտէ-

ալը պղպղուն ոճ մշակել է՝ ծրագրելը այնքան կարող է գործի մարդ արտադրել՝ որքան նախընտրին համազգեստը կրնար պարզ քաղքենի մը ռազմագէտ դարձնել: Ծրագիրը՝ մանաւանդ գրեթէ ներմուծուած մը՝ միշտ մեռած տառ պիտի մնայ՝ առանց անոր ոգւով ներշնչուած վարժապետներու: Վարժապետին անձնաւորութիւնը, անոր մտաւոր և բարոյական տիպը, անոր իտէալը և ձգտումները աչակերտին հոգեկան կեանքին զարգացումին համար ամեն բան են: Անոնց ներսը վառող կրակէն կը բռնկի աշակերտին հոգեկան կեանքին պատրոյզը որ իր տեսակին համեմատ և դորութեան չափովը պիտի լուսաւորէ համայնք մը: Ամերիկայի միութեան պատերազմին հռչակաւոր զօրապետը՝ Կրանթը Գոլէճի մը նախազգացին մասին սա վկայութիւնը տուած է:

«Մարք Հօփքինս, աշակերտ մը և նստելու համար ծառի կողմը մը կը կազմեն համալսարան մը»:

Վախճալով որ այս կէտին վերայ չափազանց ծանրացանք՝ փութանք շօշափել երկրորդ պատճառը որով թրքահայ եւ պուլկարահայ կըրթութիւնը յուսալափ կընէ ազգը: Այդ պատճառը՝ մեր միջավայրն է, Մանուկը կը գտնուի հոգեկան զարգացման առաջին աստիճանին վրայ երբ ամեն բան իր զգայարաններէն ներս կը խուժէ, իր հետաքրքրութիւնը կը խթանէ և իր գիտակցութեան մէջ հաստատուելու գիւրքեր կը բռնէ: Սեփեցած մարդիկ հակառակ իրենց ի վերջոյ ստացած սովորութիւններուն և կըրթութեանը ինքզինքնին յաճախ իրենց մանկութեան տպաւորութիւններուն և համոզումներուն ազդեցութեան ներքեւ կ'ըզան: Ասոնք կարծես ժամանակէ ժամանակ տարօրինակօրէն կը թարմանան, կ'ստովնան: Ինչ որ մարդ մանկութեան մէջ կը տեսնէ և կը սովորի գրեթէ անկարելի կ'ըլլայ ոչնչացնել: Ընդհա-

կառակը այդ անդրդուելի հիմ-
մը պիտի կազմէ իր ապագայ հո-
գեկան կեանքին : Աւելն նոր հե-
րեւոյթ կամ գաղափար պիտի
մտնէ ներս եւ հոն պիտի փնտ-
ռէ հին մը որուն հետ ազդակ-
ցութեան կապեր ունի եւ անոր
կառչելով է որ պիտի յաջողի գի-
տակցութեան հոսանքին մէջ
առ յաւէտ չը խեղդուելու : Մարդ-
երբէք չկրնար չափազանցել մեր
մատաղ հասակին կարեւորութե-
նը մեր ամբողջ կեանքին համար
եւ միջավայրին ազդեցութիւնը
մեր այդ գերագոյն կերպով ըն-
դունակ օրերուն վրայ : Ամենա-
հակառակ է գիտնալ եւ ընտրել
ինչ բան մանուկին զարմանքը,
սէրը կամ հակակրօնութիւնը պի-
տի արթնցնէ, ինչ բան զայն
խորհելու եւ փորձարկելու պիտի
մղէ : Բանաստեղծներու երկրի
մը մէջ ամենքն ալ ոտք եւ յանգ-
չափելու կը միտին : Մարտասէր
հայրենիքի մը մէջ կարծես զին-
ուորներ միայն կը մեծնան ճար-
տարարութեամբ միջավայրը մը
մանուկը կ'ընտելացնէ մեքենա-
ներու կնճռոտ բազմազանութեան
եւ շարժումներուն հետ : Սա պարզ
պարագան թէ « Սթիվընսը » ի
տունը միշտ թէյ կ'երկուր գիւ-
րաշարժ կափարիչ ունեցող թէ-
յամանի մը մէջ ծնունդ առաւ
չոգեշարժ կառքերու դարադը-
լուսին : Մանկան միտքը չկրնար
չթելադրուել իրայց ինչ բան զայն
թելադրելու արժանի է ամբողջ
կեանքի մը շահերուն տեսակէ-
տով : Մանկութենէ վերջ՝ շատ
բան կը սովորինք բայց եսպէս
շատ քիչ կը փոխուինք : Երկա-
թը ապք տաք ծեծելու է : Պէտք
է ընենք մեր ազգին պղտիկներ-
ուն համար ամեն զոհողութիւն

որպէս զի անոնք գրաւին լաւա-
գոյն խեղճին ջերմիկ ազդեցու-
թեան տակ եւ այդ խեղճին
պէտք է տալ իրեն անհրաժեշտ
գաշնակից՝ լաւագոյն միջա-
վայրը : Երբ այն կը պակսի՝ ար-
ուեստական կերպով ստեղծելու
ենք նոր մը որ ըլլայ մաքուր՝
բարոյապէս եւ հրահանգիչ մտա-
ւորապէս :

ՕՐԻՈՆ

Հնչակեան
Յեղափոխական Թիւնը

Սոյն վերնադրին տակ « Չայն
Հայրենեաց » ի վերջին թուին
մէջ « Վահրամ Մելիք » օրն կը
թուէ, այսպէս մը ըսելով, Վեր-
հնչակեան հանդանակին հաւա-
տալիքները, ուրկէ կը քաղենք
հետեւեալները :

« Հնչակեան յեղափոխութիւնը կը
պահանջէ որ շատ դժուար տեսիլի ու
քննա չի խօսուի այդ գործին շուրջը :
Հնչակեան յեղափոխութիւնը կրն-
աւոր թէ՛ տառնայ յարանաւանական
դասակարգային եւ կուսակցական
խտրութեան՝ Հայտնի եւ ընդհանր
փերը յեղափոխական մէկ գրոյի տակ
համարձակել ճշմարտ է, կազմակերպ-
ուած մեր թշնամիին ձեռքով մեր ի-
րաւունքը կարենալ խրելու համար :
Հնչակեան յեղափոխութիւնը ոչ
միայն երկրի գործունէութեան շուրջը
գրեւն ու խօսքը փոխադրուող կը նը-
կատէ, այլ նաեւ կը պահանջէ որ նոյն
իսկ արտաքին մասին գործունէութեան
շուրջը կարելի եղած լուծումներ պահ-
ուի երկիրը չը փոխադրու համար :
Հնչակեան յեղափոխութիւնը ու եւ է
պատճառ չի տեսնել որ ճշմարիտ հայ-
րենասէր յեղափոխականները իրենց
բոլոր ուժերն ու միջոցները չի միա-
ցընեն հասարակաց իշխանութիւն գծ-
կողմէն համար, եթէ ոչ կարգ մը
կողմէն համար, եթէ ոչ կարգ մը

ինքզինքնին առաջնորդ ընտրած ան-
ձերու զիրքի ու ապրուստի վտանգու-
մը » :

Արտատպելով վերոյիշեալ տո-
ղերը մենք հաճութեամբ կը գի-
տենք, թէ ինչպէս Վեր-
հնչակեան հանդանակը Հայ ազգի մե-
ծաւանդութեան փափաքին, բան
մը որուն մասին, կարծենք, չէ
կարելի տարակուսիլ կրկին կը
չի շտեն բոլոր յեղափոխական ու-
ժերը միացնելու կարեւորութիւ-
նը : Նշանակելի է նաեւ « շատ
զօրեղ տեսնելու ընաւ չի խօսե-
լու » խոհեմ կամ մանաւանդ խո-
րագէտ սկզբունքը, որուն ընդ-
հանրապէս պէտք եղած կարեւո-
րութիւնը տրուած չէ մեր յեղ-
կազմակերպութիւններու կողմէ :

ՄԱՐԿՈՒՏԵԱՆ

Մեր 71-րդ, թուի « Միթիթարական
կէտի » խմբագրականին մէջ արդէն
յիշած ենք հայ ներստատար Տ. Մաք-
սուտեանի Բարիքի Գօտիքով խոս-
կազմակերպութեան ճիշդին տա-
լին մրցանակի արժանանալը : Տիար
Չոպանեան իր « Անտիպո » օգոստոս
թուին մէջ խմբագրական մը նաւերած
ըլլալով այդ հայ նորագործող տաղան-
դին, արժանի գտնեցին նոյնութեամբ
արտատպիլ գոյն :

« Անտիպո » ի վերջին թուին մէջ քա-
նի մը տող միայն կրցայ նուիրել
զ. Մաքսուտեանի գեղեցիկ յաջո-
ղութեանը, որովհետեւ թերթը մա-
մուլի յանձնուելու պահուն էր որ
այդ լուրն իմացայ : Այդ իրողու-
թիւնը կարծէ որ աւելի մանրա-
մասնութեամբ ներկայացուի հայ հա-
սարակութեան :

Իմամու էլ Արեւի հետ . որուն
կարծիքը իւր գծանցիկ « Անտիպո »
վերջին թուին մէջ, փարիզեան բո-
լոր թատերական քննադատները —

որոնց ումնք հանրածանօթ գրագէտ-
ներ են — Պ. Մաքսուտեանի յաջո-
ղութիւնը ողջունած են շատ փա-
ղաքական լայնատեսութիւններով ո-
րոնք ամէն առաջին մրցանակ տա-
ցողին չեն շնորհակալ սոցառել :

Ժիլ Պլաւիլ մէջ « Եղիշ » կը գրէր.
« Ամէն ոք համաձայն էր թէ Պ. Մաք-
սուտեան լայնաբանապէս արժանի
էր սոցալիստ մրցանակին որ իրեն
շնորհուեցաւ . կարելի է իրեն մե-
ղադրել թէ չափազանց ցոյց կուտայ
իր վարպետին՝ Սիլվէնի ազդեցու-
թիւնը խորապէս կրած ըլլալը
իր գիտականութեանը շնորհիւ քիչ
մը երկայնի . եւ Բայց հազուադէպ
ըմբռնող թեմի մը արտասանեց Ար-
խան կը գրաստուի թերթուէին մենա-
խօսութիւնը : Ոտանաւորները ար-
ժեցուց անուանալի հմտութեամբ
մը . իր անկողնութիւնը ունկնդր-
ելով յոգեց : Լաւ ձայն մը ունի . . .
Պ. Փալո եւ Պ. Մաքսուտեան տա-
ցան առջին յիշատակութիւն մը
(կատակերգութեան) . Պ. Մաքսուտե-
ան շատ լաւ կազմած էր « կրկնաւ
գրողներ » Արեւի զերբ : Բայց իր
« լուծումներ » չափ երկայնի էին ,
որովհետեւ շարժումը քիչ մը դան-
դաղացուց : Առանց այդ սխալին ,
(կատակերգութեան) մրցանակ մը ան-
չուտ պիտի տաւոր » շնորհիւ իր խո-
րին յաւակութիւններուն : »

Ռենէ Մեզրուտ կը գրէ ՄԱԹԷՆԻ
մէջ « Պ. Մաքսուտեան , որուն մի-
այն պիտի մեղադրեմ իր պատուա-
կան լայնաբանութիւնը չափազանց
ցոլացուցի . ըլլալով ու բաւական խոյս
տուած չըլլալով այն կազմապարէս ո՛ւր
խելոցներ ու խմբուներ է , թերպու-
լէի միանախօսութեան մէջ ունեցաւ
գաղտնութեան , ցաւի , խիղիւ եւ անձ-
կու իման գեղեցիկ չեղանք »

Յարանաւ Շար Նիւն կը գրէր Էֆօ
քը Փարիսի մէջ : « Պ. Մաքսուտե-
անին է որ արուեստը պատուոյ մը-
ցանակը : Այդ պարունը ողորդական
զրոյց ունի . եւ ողորդական ձայն .
գիտէ ամէն ինչ որ կարելի է խոր-
վիլ . յուսանք որ պիտի սորվի սոր-

ՆԵՐՍԵՍ ԱՅՏԱՐԱԿԵՑԻ

(Արտատպուած ԲԱՋՄԱՎԷՊ հանդէսէ)

Մաքնիսիդոր Պաշկովին կաթողիկոսին ա-
ռողջանելու համար Լազարեանները մատուցին
երեք հազար մանէթ , բայց նա չընդունեց :
միայն խնդրեց , որ նկարել տան կաթողիկոսի
պատկերն եւ նորա իսկական ստորագրութիւնը
լինի պատկերի ներքոյ , որ մնայ յիշատակ իւր
սերունդին : Նորա փափաքը կատարեցին Լա-
զարեանները : Կաթողիկոսին նկարեց մի իտա-
լացի հմուտ պատկերահան եւ ոսկեզօծ շրջա-
նակով գրած, եւ կաթողիկոսին իր ձեռքով գրած մի
քանի սողով ընծայեց . այդ մակագրութիւնից
այժմ էլ մտաբերում եմ հետեւեալը . « Յանկա-
լի է ինձ լինել ակն յանդիման սերելոյն իմ » :

Ներսէս Շնորհալու ընդհանրականը Ռու-
սերէնի թարգմանում էր իսկական պետական խօ-
հրդական Աղէքսանդր Մակարեան ինքնապաշտ-
ցը , Կազանի աւագ եկեղեցւոյ աւագ քահա-
նայի օգնութեամբ : Խուզարարչեանքն իր կողմ աշ-
քով կուրացել էր . նա շատ յաճախ դալիս էր
կաթողիկոսի մօտ եւ ինքը ճարտարապետ էր .
կաթողիկոսը յարգում էր նորան : Սա այն իսկ

դարաշեանցն է , որ երկու հատոր հայ-առաւ րա-
տարան է յօրինել : Երբեմն կաթողիկոսը ճա-
չի էր հրաւիրում նորան . մի օր ճաչին աղա-
կաշատուրի ներկայութեամբ կաթողիկոսն ասաց .
« Աղէքսանդր Մակարիչ , ինչպէս որ աղային
մեծ ծախսի տակ ձգեցի ես իմ հիւանդութեան
պատճառով » . Խուզարարչեանքը պատասխանեց
« Ոչ վեհափառ տէր , դուք օգուտ տուեցիք աղա-
կաշատուրին » : « Այլ օրհնած , ասաց կաթողի-
կոսն , այս քանի ժամանակ բժշկանքի , գեղերի
եւ մեր երկար մնալու վերայ քիչ ծախս չէր
լինի » : Խուզարարչեանքը պատասխանեց . « Այո ,
բայց վեհափառ աղա ինչպէս որ ինչպէս որ ինչպէս
թեան բարձրաստիճան անձերին այս տարի էլ
երկու մեծածախս խնջոյք պիտի տար , եւ ըստ
կարծեաց ամեն մի խնջոյք հինգ — վեց հազար
մանէթ ծախս ունի , այնպէս չէ՞ , աղա ինչպէ-
սուր » , հարցրց իր փառաշեանքը . նա էլ ծիծա-
ղելով պատասխանեց . « Այո » , այժմ , շարու-
նակեց ինքնապաշտեանքն , երբ հասնում է հերթը
հրաւիրանքի ինչպէս որ աղային տուած են՝
հերթը ձեռն է , իսկ նա պատասխանում է .
« Ես իմ ամբողջ կաթողիկոսն է կենում , ինչ-
պէս կարող եմ անհանգստ ընել նորա » . սո-
րանով աղաւթում է ծիծաղելու անհանգստու-
թիւնից , այնպէս չէ՞ , վեհափառ » . նա էլ
պատասխանեց . « Մտոյդ է » եւ բոլորն էլ ծի-
ծաղեցին : Եւ իրաւ . Իթէ կաթողիկոսի վերա-
արած ծախսերը հաշուին հազիւ 5000 մանէթի

կը հասնէր . այն էլ Պետերբուրգի Հայոց եկե-
ղեցւոյ կալուածներին եկամտից էր : Աղա ինչպե-
տեւրը համարեա ամեն երեկոյ մինչեւ գիշեր-
այ ժամը 11 կաթողիկոսի հետ խօսակցեց էր
Մի երեկոյ նա խօսքի մէջ Հայերին ապերախտ
ազգ անուանեց . կաթողիկոսը հերքեց ասելով ,
թէ ամեն ազգի մէջ էլ ապերախտներ կը գա-
նուին . ինչպէս որ կամեցաւ փաստով ապացու-
ցանել եւ օրինակ բերեց Սիմէոն Սուլթանյան-
ցին : Սա չբաւարար ծնողները որդի լինելով
ընդունում է Լազարեանց ձեռնարանն եւ այն-
տեղ ուսման ընթացքն աւարտելով մտնում է
համալսարանն , այնտեղից դուրս գալով — ծառա-
յութեան , այժմ իսկական պետական խորհր-
դական աստիճան ունի : Սա փողոցում պա-
տահելիս աղա ինչպէս որ ինչպէս որ ինչպէս որ
ճառ բարիբաղին , չի բարեւում . այնքան հազար
էր ըստ աղա ինչպէս որ ինչպէս որ , կաթողիկոսը պա-
տասխանեց . « Աղա ինչպէս որ , երբեք տեղիք
տուած կը լինես , այն աստիճան ապերախտ
չեմ կարծում որ լինի » :

Ամեն կրկնապի օրեր , պատարագից յետոյ Պե-
տերբուրգի հայերը դալիս էին կաթողիկոսի օրհ-
նութիւնն օտանալու . եւ վայելում էին սուրճ
եւ չոկոլատ : Մի կրկնապի եկած էր եւ Սի-
մէոն Սուլթանյանցն : Այնտեղ էին եւ ինչ-
պատեւր աղան եւ իւր մեծ եղբայրը աղա Յով-
հանէսը : Կաթողիկոսը խօսակցութեան մէջ ա-
սաց , թէ « ապերախտ մարդը անբան կենդանուց

ցուցանէ որ ոչ միայն Էմմանուէլ Արէն դիտել տուած էր, արեւելուայ Հայութիւնը ո եւ է ժողովրդէ աւելի կարող պէտք է ըլլայ որքանքուներ հանելու, այլ եւ թէ Հայութեան ծոցէն ելած ողբերգու մը ունի իր ան- ձին ու իր ցեղին ինքնուրոյն շնչար եւ կարող է, չնորհիւ ճիշդ այդ ինք- նուրութեան, մեծերուն մէջ ըլլալ : Ա. ՉՕՊԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Ըստ «Արմէնի» թուս գրա- գէտ մը՝ Տ. Սօքոլովսքի, որ այս վայրկեանի վիճենիս կը գտնուի, «Ս. Բեթերպուրկաքայա Վէտէ- մոսթի» լրագրին մէջ ընտիր յօդուած մը հրատարակած է ի նպատակ Սասունի Հայոց, Եւրո- պական պետութեանց անդգայու- թիւնը պախարակել յետոյ, ա- զատամիտ յօդուածագիրը յոյս կը յայտնէ որ Ամերիկան ստանձնէ հարստահարեալ Հայոց պաշտ- պանութիւնը :

— Միւսին լրագրին մէջ կը կարգանք հետեւեալը :

Արպալետ փողոցի վարժարա- նի աշակերտներու գործերուն 1904 ի ցուցահանդէսին մէջ, աչ- քի կը զարնեն քանի մը գեղե- ցիկ նկարներ որ հետեւեալ ար- ձանագրութիւնը կը կրեն.

«Այս նկարներու արտադրիչը, Մեծատուրեան, Հայ մը, ջարդերու պատճառաւ իր հայրենիքէն տա- րագրուելով, եկած Արպալետ փո- ղոցի վարժարանը մտած է 12 տարեկան հասակին մէջ, առանց գծագրել գիտնալու : Այսօր Լու- վուզիէի վարժարանին աշակերտ է եւ նորեւս դաստիարակի արտո- նագիր ստացած է 16 տարեկան հասակին մէջ :»

Այս յուսալից ուսանողը որդին է «Գութան» ի անօրէնին :

ՅԱՅՏԱՐԱՐ ՈՒԹԻՒՆ

Աղք. Ընկ. Ընդհանուր Ժողովը տե- ղի պիտի ունենայ յառաջիկայ կիւրակէ հոկտ. 10 ին կէս օրէ վերջ ժամը 8 ին Աղք. վարժարանին մէջ :

Կը խնդրենք պատուարժան անդամ- ներէ փութալ ներկայ գտնուիլ կարե- լոր խնդրոյ մը որոշումը տալու հա- մար եւ ընդհանուր հաշուետուութեան եւ Գործ, Ժողովոյ նոր ընտրութեան :

Ի Դիմաց Գործ. Ժողովոյ

Վ. Ասենազարի Վ. Ասենազարի
Պ. Քիւրքճեան Մ. Գարագաշեան

Գործ, Ժողովս յանուն աղքատաց կուգայ իր խորին շնորհակալութիւնը յայտնել ի նորոգ հանգուցեալ Տ. Ար- սէն Էսափաշեանի որ իր վերջին վայրկեանին չէ մոռցած նաեւ 100 ֆր. գումար մը կտակել քաղաքի թշուառ աղքատաց բաժնուկու համար :

Ժողովս ալ վերոյիշեալ կտակի հա- մաձայն նոյն գումարը բաժնած է ար- ժանաւոր աղքատաց :

(Նոյն)

Մ Ո Ւ Հ Ա Ր Է Պ Է

— Թօքի 11 հոկտ. — Եանթա քէօմիւր մատենիւրին շիւալա տողրու Բուսլարըն իքինճի հիւ- ճոււմ կայէթ ահհէյէթիլի պիւր նէ- թիճէյէ վասըլ օլտու. շէօյլէքի Բուսլար ճաթօն օրտուսընըն սաղ ճէնահընը մուհասէրէ իթմէք իսթէտիլէր, ժէնէրտլ Նօցու Բուս- լարըն բլանընը ֆէհմ իտէրէք, ճէնուպա տողրու կէրի չէքիլմէ- յէ պաշլալըպ, Բուսլարը տուգաղա տիւշիւրէրէք պիւրտէն պիւրէ հիւ- ճոււմ միւպաշէրէթ իթաի. ժէ- նէրալ Օգու Բուսլարըն սօլ ճէ- նահընը մուհասէրէ իտէրէք էօյլէ պիւր տէհէյէթիլի աթէշ իթ- տիլ քի Բուսլար պիւթիւն պիւ- թիւն շաշըրըպ մուհարէպէ մէյ- տանընտա 30 ատէթ թօք, արապալարը, պիւր չօգ մուհիմ- մաթը հարպիէ վէ բէք թէլէ- ֆէյաթ վէրտիքտէն սօնրա ֆի- րարա եիւզ թուլթուլար :

Լօնտրա 3 հոկտ. — Բուս օրտու- սընըն սօլ ճէնահը 24 թօք վէ պիւր չօգ էսիւհա վէ մուհիմմա- թը հարպիէ վէ նագլիէ արապա- լարը տիւշմանա թէրք իթմիշ տիւր. Բուսլար եէնիտէն քէնտի կայալ իթաիքիլէրի մէվգըլարը զապթ իթաիքիլէրի իչիւն չէտի- տէն հիւճոււմ իթմիշէր, լաքին տիւշմանըն գուզլէթիլնէ գարշը գօյաւալարաք պէօյլէք թէլէ- ֆաթլէ ֆիւրարա եիւզ թուլթուլա- լար :

— Թօքի 3 հոկտ. — Տիւնքիւ մուհարէպէտէ ժէնէրալ Օգու 10 թօք զապթ իթմիշտիւր, մու- հարէպէ շէտիտ սուրէթտի տէ- վամ իտիյօյ. Բուսլար կէրի չէ- քիլմէյէ մէճպուր օլտուլար : Մա- ըշալ Օյամանըն բաթօրթընա նագարէն իչպու մուհարէպէտէ Բուսլարըն թէլէֆիւթը 30000 է միւթէճապիլ տիւր :

— Լօնտրա 3 հոկտ. — Գուրօքի- նին օրտուկեհհընտան «Սթան- տարտ» կաղէթաընա պա թէլէ- կըրաֆ պիւլտիլիլիլ տիւր, Բուս- լար հէր թարաֆտան ֆէնա հալ- տէ մաղլուպ օլտուլար, վէ չի մալա տողրու 32 քիլմէթիւր կէ- րի չէքիլտիլէր. 70 ատէտ թօք ճաթօնըլար զապթ իթաիլէր. է- սիւր տիւշէն Բուսլարըն իֆատէ- սինէ նագարէն իչպու մուհարէ- պէտէ ժէնէրալ Գուրօքաթքին պիւլաթ քէնտիսի գօմանտա իթ- միշ տիւր. ճաթօնըլար Բուսլարը չէտիտէն գօվալմադտա տըր- լար. մարէշալ Օյամա թուս օր- տուսընը քեամիլէն մուհասէրէ թաշթընա ալապիլէճէկինէ գալ- իէն իւմիւտ իթմէքտէ տիւր :

— Լօնտրա 3 հոկտ. — Շանկալ- տան պա թէլէկրաֆ «Սթան- տարտ» կաղէթաընա պիւլտիլ- տիլէրինէ նագարէն Բօրթ-Ար- թուր իւզէրինէ ճաթօնըլարըն հիւճոււմընտա Բուսլարըն Բեքիւ-

լաշ նամ քրուաղէօր իւզէրինէ օն ատէտ կիւրլէ իսապէթ իտէ- րէք Խանըպ քիւլ օլմուշ տըր. Բեքիլիզաւ նամ զըրհըլը գաշադ իչիւն լիմանտան տըշարը չըգմադ իսթէտիլնտէ գաթալը պուլա- րադ կիւրույէ ալաթի իթմիշ տիւր :

ՍՕՆ ԹԵԼԵԳՐԱՖԻ ԱՐ

— Լօնտրա 11 հոկտ. (Ն Տ) ճաթօն- ըլլար հէր թարաֆտան Բուսլա- րը թաադիպ իթմէքտէ տիւրլէր, չիմտիէ գատար մուգաֆէրիէթի Գալանան ճաթօնըլար տըր ճա- րօն օրտուսընա 12000 նէֆէր ի- լէ 60 ատէտ թօք վէ մուհիմմա- թը հարպիէ եէթիշէրէք պիւր գաթ տաշա քէսպը գուզլէթ իթաիլէր :

Թօքի 4 հոկտ. — Մանչուրիա օրտուկեհհընա պա թէլէկրաֆ հապէր վէրտիլէրինէ նագարէն մուհարէպէ սաղ ճէնահը վէ ա- սըլ մէրքէգտէ թաթիլ օլընմըշ տըր, լաքին սօլ ճէնահ հալէա մուհարէպէի տէվամ իթմէքտէ տիւր. ճաթօնըլար եէնիտէն 15 ատէթ թօք զապթ իթմիշէր :

— Թօքի 4 հոկտ. — (Բէսմի) Բաշքըր թէլէկրաֆ աճէնթէսի թարաֆընտան հապէր վէրիլտի- յինէ բաղթէն հոկտ. 2 տէ մուհա- րէպէ էանասընտա, ճաթօնըլա- րըն սաղ ճէնահը Շախօյա հիւ- ճոււմ իթաիլէր. Բուսլար թա- րաֆընտան հէր նէ գատար տէհ- չէթիլ պիւր մուգապէլէ կէօրտիւ- լէր իսէ, չարնաշար Բուսլար մաղլուպ օլուպ մէվգըլարընը թէրք իթմէյէ մէճպուր օլտու- լար, ճաթօնըլար Շախօյա վէ Սանքօթիլի զապթ իթաիլէր. էօյլէնտէն սօնրա Բուսլար եէնի հիւճոււմ իթաիլէր իսէ, ճաթօնը- լար թարաֆընտան կէրի սիւ- ըիւլտիլէր :

Լօնտոն 4 հոկտ. — Մուգտէն- տէն տիւնքի թարիլալէ կէլէն, թէլէկրաֆար, Բուս ասքէրի կայէթ Խօրիւն օլուպ, հաթ- թա լէվաղիմաթը հարպիէնին նօքսանըլը քէնտիլէրինի տիւ- չիւնտիլմէքտէ վէ Բուս աս- կէրի հէյէճանլա տալըմ կէրի չէքիլմէքտէ տիւր :

Լօնտոն 4 հոկտ. — Մուգտէն- տէն տիւնքի պիւր թէլէկրաֆ մու- հարէպէ հոկտ. 4 ինտէ շա- ֆադտա եէնիտէն պաշլատը :

Բեթէրապուրի 4 հոկտ. — «Պիւր Ժիլի» Վէտօֆօտի կաղէթա- սընա մուգտէնտէն հապէր վէ- րիլմիշ տիւր. պու կիւն Մուգ- տէնէ եէթիշէն Բուս օֆիցէրլէ- րի պիւլտիլիլէր տիւր քի տիւնքի մուհարէպէտէ Բուսլար ճաթօնըլարտան 24 թօք վէ 8 միթրայէօզ զապթ իթմիշէր. մուհարէպէ էլան տէվամ իթ- մէքտէ իմիշ. (Իչպու թէլէկրաֆ

հալաաիսի բէք աճալիպ կէօրիւ- նիյօր, կաղէթամըլը օգուլան- լար իչպու թէլէկրաֆարըն հանկըր սահիհ օլտուլընա թէ- րէտիւտտէ գալաճադար. պուս- լարըն հանկըր սահիհ վէ հան- կիսի տողրու տըր)

ԹԻԻՃՃԱՐԻՑԻ

ՎԱՌԱՍ, ՋԱԽԻՐԻ	հոկտ. 6
ՊՈՒՂՏԱՅ	
Վալիճ 54-60 լիպ.	9.80 / 11.80
Արապա 52-62 լիպ.	9 / 12 20
ԱՐԲԱ,	
Վալիճ 100 քիւր հին	
Նօր	10. — / 10.40
Արապա 42-45 լիպ.	5.40 / 6.
ԵՈՒԼԱՅԱՐԱՊԱ 33/36 լիպ.	4. 30 / 4. 70
Վալիճ 100 քիւր	10.40 / 10.60
ՅԱՍՈՒԼԵԱ	100 քիւր - 26 - 28
Արապա 100 քիւր	25 - 29
ՏԱՐԸ արապա	Խօզ
ԴՕԼՕՁ արապա 55-60 լիպ	9. 90 / 11
ՄԻՍԻՐ 100 քիւր	
ՋԱՎՏԱՐ արապա	7.90 - 8.10
« Վալիճ	7.60 / 8.
Կիւնտէ 40 - 50 լիպ	վէ 7-800
արապա կէլմէքտէ	Վալիճ մուհարէպէ
նարօլէն 20 ֆր. արապա մուհարէպէ	նարօլէն 20. 10

ՍՐԱՐԱՅԻՑԻ

Նարօլէն 20, 20 ֆրանք
Օսմ. լիւրսը 22, 75 ալիւն ֆրանք

ՊԱՂԱՅԻՑԻ

Վարնա քիւրապիտա պաղալիլէ	
մալլէրին պու կիւնքի ֆիլաթը, ալթուս	
Ֆրանք իլէ :	
ԳԱՀՎԷ	1,90/2
Շէֆէր նէմցէ	70
Շէֆէր [քէսմ] սանաղ	38.
ԲԻՐԻՆՃ Ֆիլիպէ չուվալը	47.
» Ճաթօն »	38.
» Ինկիլիլ »	28
» Բիլլօն »	50
ԿԱՀ. անաղը	9. 40
Ջէթիլի հաղը քիւր	90. — 1
ԳՈՒՐՈՒ Իւլիւմ	30

ՈՒՇԱՐՈՒԹԻՒՆ

Երաշխաւորում քուտու. ջղա- յին և համաձայն հիւանդոսիւնեհե հաւապոյնեհե :

ԱՄԵՆԱՆՈՐ ԳԻԻՏ

«Էլէքթրա» միքնալիկը ծանօթ ա- մենալաւ դարմանն է հետեւեալ հի-ւանդութեանց. Յօգացաւ, արեան կու- տակոււմ, ականջի խժժոււմ, սրտի բարձրութեւ, կարկաշտի սրտի, դող- դաղանք մարմին կամ անոր մասե- լուն, ստամոքսի, ձեռքերու կամ ոտ- քերու ջղաճգութիւն, միզաթուււ- թիւն, անքնութիւն, ջղալին գլխացաւ, ձեռքի կամ ոտքի պաղութիւն կամ ջրոլիք, տիւրթակի պակասութիւն, անդօրութիւն գլխու պտոյտ եւ համա- նման հիւանդութիւններ :

Գործիքն գինն է 7 ֆր. Թղթա- տարով 80 սանդիւմ աւելի :

Սարուածի (թաղըմ) գինն է 15 ֆր. Բամպուրով 70 սանդիւմ աւելի
Սարուածը «Թաղըմ» կը ծառայէ մի- այն վեց տարուէն աւելի հին հիւան- դութեանց համար :

Պուլկարիոյ համար ներկայացուցին է ԿէՕԲԿԻ ՎԼԻՐԵԱՆԵ և Ընկ.

Բուսլուպ փողոց Թոնգա Նոմբօ 11/II

Одговорили А. Курбетиянъ
печатица "Взаимность" — Варна,